Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-139-03.10.2017-ՊԻՄԻ-011/0 օրենքի նախագծում կատարված փոփոխությունների

ՆԱԽԱԳԻԾ

Կ-139-03.10.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի «տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու եւ դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ» բառերը փոխարինել «պետական եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանությունը, այդ թվում՝ տեղեկությունները դասում է պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին» բառերով:~~

~~***Հոդված 2.*** Օրենքի~~ 17-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

~~***Հոդված 3.*** Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝~~

~~1) առաջին նախադասությունում «ինչպես նաեւ այդ նպատակով հատուկ լիազորված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի եւ Հայաստանի Հանրապետության ֆինանսների բնագավառը կառավարող պետական մարմնի ներկայացուցիչները» բառերը փոխարինել «ինչպես նաեւ այդ նպատակով հատուկ լիազորված Հայաստանի Հանրապետության ֆինանսների բնագավառը կառավարող պետական մարմնի ներկայացուցիչները, իսկ~~

~~հաշվեքննությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի ներկայացուցիչները» բառերով.~~

~~2) 2-րդ նախադասությունում «Եթե վերահսկողության» բառերից հետո լրացնել «կամ հաշվեքննության» բառերը:~~

Հոդված 42. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը: